Փոփոխություն ՀԿ
Change NGO

№ 32
26 հունիս, 2024 թվական

**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ**

Հարգելի Գրիգոր Ներսիսյան,

2024 թվականի հունիսի 26-ից Մետան (Meta) իր Facebook եւ Instagram հարթակներում՝ որպես մուտքային տվյալ (input), սկսում է օգտատերերի ստեղծած բովանդակությունն օգտագործել սեփական արհեստական բանականության մոդելները զարգացնելու (AI model training) նպատակով[1]:

Այս ծանուցմանը զուգահեռ՝ Մետան միաժամանակ հրապարակել է ձեւանմուշ[2], որը լրացնելով, Facebook եւ Instagram հարթակների օգտատերերը կարող են դիմել Մետային՝ իրենց վերաբերյալ տեղեկատվությունն ու ստեղծած բովանդակությունը Մետայի արհեստական բանականության մոդելների զարգացման համար չօգտագործելու հայտով: Հրապարակված առցանց ձեւանմուշով հայտ ներկայացնելիս՝ օգտատերը կարող է ցանկից ընտրել, թե որ պետությունից է հայտն ուղարկում, որպեսզի Մետան հայտի քննարկումը դիտարկի օգտատիրոջ ռեզիդենտ պետության օրենսդրության համատեքստում: **Այս ցանկում Հայաստանի Հանրապետությունը ներառված չէ[3]:**

Կարեւոր է արձանագրել, որ **Մետան չի հրապարակել հայտերը մերժելու եւ բավարարելու հստակ չափանիշներ՝ դրանք թողնելով սեփական հայեցողության դաշտում, ինչն էլ ավելի խնդրային է դարձնում առկա ընթացակարգն անձնական տվյալների պաշտպանության տեսանկյունից**: Ավելին, **հրապարակված չէ որեւէ ուղեցույց, որը կպարզաբաներ առնվազն հետեւյալ հարցերը**.

- ⇨ **ի՞նչ իրավական հիմք(եր)ով են մշակվում անձնական տվյալները,**
- ⇨ **ի՞նչ իրավաչափ նպատակ է հետապնդում այս գործընթացը,**
- ⇨ **ո՞ր տեսակի անձնական տվյալներն են հավաքվում՝ հետագա մշակման համար,**
- ⇨ **որքա՞ն ժամանակ են պահպանվելու այդ տվյալները,**
- ⇨ **ինչպե՞ս են մշակվելու եւ պահպանվելու զգայուն տվյալները (sensitive data),**
- ⇨ **ինչպե՞ս են պաշտպանվելու անձնական տվյալները,**
- ⇨ **ինչպե՞ս է ապահովվում օգտատիրոջ՝ իր անձնական տվյալները մշակելուց հրաժարման հարցերը,**
- ⇨ **ինչպե՞ս են օգտագործվելու այդ անձնական տվյալները,**
- ⇨ **ինչպե՞ս է կարգավորվում անձնական տվյալները երրորդ կողմին տրամադրելու հարցերը,**
- ⇨ այլ:

Անձնական տվյալների պաշտպանության տեսանկյունից առկա մտահոգություններով է պայմանավորված նաեւ այն հանգամանքը, որ Եվրոպական միությունում անձնական տվյալների պաշտպանության հարցերը կարգավորող մարմիններն արգելել են Մետային ԵՄ ռեզիդենտների անձնական տվյալներն ու

[1] Առավել մանրամասն հասանելի է հղմամբ. https://www.facebook.com/privacy/genai/
[2] Հասանելի է հղմամբ. https://m.facebook.com/help/contact/1266025207620918?wtsid=rdr_034clxHvmNbBmoJGV
[3] Կից՝ ցանկի նկարը

ստեղծվող առցանց բովանդակությունն օգտագործել արհեստական բանականության մոդելները զարգացնելու նպատակով[4]:

Այս առնչությամբ կարեւոր է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը որեւէ հրապարակային հայտարարություն չի տարածել Մետայի վիճահարույց փոփոխությունների առնչությամբ իրականացված գործողությունների վերաբերյալ, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 51-րդ հոդվածով ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում եմ պարզաբանող տեղեկատվություն տրամադրել հարցի առնչությամբ Անձնական տվյալների պաշտպանության գործակալության իրականացրած գործողությունների վերաբերյալ, որոնք միտված պետք է լինեն **ապահովելու** ՀՀ ռեզիդենտների **անձնական տվյալների էֆեկտիվ պաշտպանությունը:**

Կանխավ շնորհակալ եմ իրավիճակին արագ արձագանքելու համար:

Հարգանքով՝

Ստելլա Շանդիրյան

Խորհրդի նախագահ
«Փոփոխություն» ՀԿ

[4] Առավել մանրամասն հասանելի են հղումներում. 1) https://techcrunch.com/2024/06/14/meta-pauses-plans-to-train-ai-using-european-users-data-bowing-to-regulatory-pressure/ 2) https://data.consilium.europa.eu/doc/document/ST-5662-2024-INIT/en/pdf 3) https://www.edpb.europa.eu/system/files/2024-04/edpb_opinion_202408_consentorpay_en.pdf

**Մետայի հրապարակած պետությունների ցանկը, որտեղ Հայաստանը ներառված չէ**

ամբողջական ցանկը հասանելի է հղմամբ՝
https://m.facebook.com/help/contact/1266025207620918?wtsid=rdr_034cIxHvmNbBmoJGV